«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում, ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում

Դաստիարակ՝ Արմինե Զախարյան

Մանկապարտեզ՝ «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022 թ

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 5
Գլուխ 2 8
Եզրակացություն 10
Գրականության ցանկ 11

Ներածություն

Կրթությունը բոլոր երեխաների հիմնարար իրավունքն է, որի իրականացման երաշխավորը ՀՀ-ն է: Հայաստանի կառավարությունը 2014թ. դեկտեմբերի 1-ին ընդունած, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունումով հանրակրթության համակարգում անցում կատարեց համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի, մինչև 2025թ. օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը: Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿՈՒ) երեխաների կրթական գործընթացին մասնակցությունն է, ըստ հանրակրթության պետական չափորոշիչների: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի «ուսուցման հետ կապված դժվարություններ, զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններնունեցող այն անձը, որի կողմից հանրակրթական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են առանձնահատուկ պայմաններ»:Կրթության առանձնահատուկ պայմաններն օրենքով սահմանված են՝ որպես «ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, սոցիալական, մանկավարժահոգեբանական և այլ ծառայությունների ամբողջություն» [Ներառական կրթությունը գործնականում, Սյուզաննա Պետրոսյան, Երևան 2021 թ., էջ 6]:

Հետազոտական աշխատանքի թեման է՝ սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում:

Թեման ինձ հետաքրքրեց նրանով, որ ներառական կրթությունը հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին և հատկապես ԿԶԱՊԿՈՒ երեխաներին իրենց հասակակիցների հետ գտնվել նույն միջավայրում և ստանալ հավասար կրթություն:

Իմ նպատակն է բացահայտել ԿԶԱՊԿՈՒ երեխաների հետ կազմակեպվող աշխատանքի առանձնահատկությունները և գտնել ավելի արդյունավետ մեթոդներ ուսումնադաստիարակչական աշխատանքս ավելի ճշգրիտ կազմակերպելու համար:

Հետազոտական աշխատանքի վարկածն է՝ խաղային տեխնոլոգիաների կիրառումը պարապմունքի ընթացքում՝ հնարավորություն կտա ներառել շփման և հաղորդակցման ոլորտում դժվարություն ունեցող սաներին:

Ներառական կրթությունը երիտասարդ համակարգ է և ունի չլուծված խնդիրներ, որոնցից մեկն էլ ԿԶԱՊԿՈՒ երեխաների և բնականոն զարգացում ունեցող երեխաների փոխհարաբերությունների ձևավորումն է: Եթե նախկինում երեխաների զարգացման չափորոշիչները օգտագործվում էին որպեսզի հայտնաբերեն երեխայի «թույլ կողմերը», որը հիմնված է բժշկական մոդելի վրա, ապա այժմ ուշադրությունը տեղափոխվել է երեխայի անկարողություններից կարողություններ՝ «ուժեղ կողմերի» վրա, որը հիմնված է սոցիալական մոդելի վրա: Հենվելով երեխաների ուժեղ կողմերի վրա, պետք է զարգացնել թույլ կողմերը:

Գլուխ 1. ԿԶԱՊԿՈՒ երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպման առանձնահատկությունները

Մեր առօրյայում հաճախ են օգտագործում «հատուկ կարիքով երեխաներ» հասկացությունը: Իսկ ովքե՞ր են նրանք և ինչով են հատուկ: Պետք է ընդունել, որ հատուկ են ոչ միայն այդ երեխաները, այլև նրանց խնամելու, դաստիարակելու և ուսուցանելու պայմանները: Նրանք ունեն ֆիզիկական և հոգեբանական դժվարություններ, անհրաժեշտ է, որ հատուկ վերաբերվեն ինչպես երեխային, այնպես էլ նրա կարիքներին:

Մարդը սոցիալական էակ է, հետևաբար շփումը նրա հիմնական պահանջմունքներից է: Ներառական կրթությունը նպաստում է հատուկ կարիքով երեխաների և բնականոն զարգացող երեխաների շփմանը, որի միջոցով էլ հատուկ կարիքով երեխաները ինտեգրվում են հասարակությանը և դառնում նրա մի մասնիկը: Եթե զարգացման դժվարություններ ունեցող երեխան կարողանա շփվել, հայտնել իր կարիքի, ցանկությունների մասին, ապա ավելի հեշտությամբ կներառվի իրեն շրջապատող աշխարհ և ավելի շատ տեղեկություն կստանա շրջապատի մասին:

Երեխայի զարգացման հարցում շատ կարևոր է մեծահասակի հետ հաղորդակցումը, սակայն իր հասակակցի հետ շփման ժամանակ երեխան ձեռք է բերում ինքնուրույնություն և դառնում ավելի անկախ: ԿԶԱՊԿՈՒ երեխաների զարգացման գործընթացում շատ կարևոր է խաղային գործունեության դերը: Խաղը մի գործընթաց է, որտեղ չկա ճնշում, հարկադրանք, երեխան անկաշկանդ արտահայտում է իր հույզերն ու ցանկությունները,կարողանում է համագործակցել ընկերների հետ: Խաղը զարգացնում է երեխայի խոսքը, հիշողությունը, երևակայությունը, դաստիարակում է ընկերասիրություն, հոգատարություն, զսպվածություն: Խաղը կազմակերպելիս դաստիարակը պետք է հաշվի առնի բոլոր երեխաների՝ հատկապես ԿԶԱՊԿՈՒ երեխաների կարողություններն ու հմտությունները, ցանկություններն ու հնարավորությունները, և յուրաքանչյուր երեխայի պետք է մոտենա յուրովի: Դաստիարակը, հենվելով երեխայի ուժեղ կողմերի վրա, պետք է զարգացնի թույլ կողմը: Հենց խաղի ժամանակ էլ դաստիարակը կարող է կատարել դիտարկում և բացահայտել իր խմբում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին:

[Նախադպրոցականների շփման հմտությունների ձևավորում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2008 թ., էջ 3-15]:

1.2 **Ծնող-երեխա-ՆՈՒՀ եռանկյունի**

Որպեսզի աշխատանքը ավելի արդյունավետ և նպատակային դառնա, մանկավարժական թիմը պիտի համագործակցի երեխայի ծնողի և համայնքում գործող այլ կազմակերպությունների մասնագետների հետ: Ստեղծվում է ծնող-երեխա-ՆՈՒՀ եռանկյունին, որի անդամները գործում են միասնական: Շատ կարևոր է, որ երեխայի համար հարմար միջավայր ապահովվի և՛ ընտանիքում, և՛ ՆՈՒՀ-ում:

1.3 **Դիտարկում**

Երեխայի կրթության և զարգացման առանձնահատկությունների բացահայտման գործում շատ կարևոր է երեխաներին դիտարկելը, որը թույլ է տալիս ավելին իմանալ նրանց մասին: Դիտարկման ժամանակ մանկավարժը բացահայտում է թե ինչն է հետաքրքրում երեխաներին, ինչն է ժպիտ առաջացնում նրանց դեմքին, ինչ գիտեն նրանք և ինչ կարող են անել: Դիտարկումը դիտվում է որպես նախադպրոցական տարիքի երեխաների գնահատման ամենապարզ, բայց ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: ՆՈՒՀ-ի մանկավարժները դիտարկում և բացահայտում են երեխաների կարողություններն ու հնարավորությունները նրանց կարիքները գնահատելու, զարգացումը խթանելու և կրթությանն աջակցելու համար:

1.4 **Գնահատում**

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցությունը տրամադրվում է երեք մակարդակներում՝ նախադպրոցական, տարածքային, հանրապետական: Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որը երեխայի նախադպրոցական կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն է, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտումը: Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. Նախադպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է ՆՈՒՀ-ի մանկավարժների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից:

2. Տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ ՏՄԱԿ) կողմից:

Նախադպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է մանկավարժի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ պարապմունքի ընթացքում, խաղերի, միջոցառումների ժամանակ: Մանկավարժը որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ, համագործակցում է մանկավարժահոգեբանական խմբի և երեխայի ծնողների հետ: Եթե երեխայի նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի գործունեության որևէ խանգարում, ապա ՆՈՒՀ-ը ծնողի համաձայնությամբ դիմում է ՏՄԱԿ-ին տարածքային մակարդակի գնահատում իրականցնելու նպատակով: ՏՄԱԿ-ը իրականացնում է գնահատում՝ մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշների համաձայն: Գնահատման արդյունքում ԿԶԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվում է մանկավարժահոգեբանական ծառայություն՝ համաձայն Անհատական ուսուցման զարգացման պլանի (ԱՈՒԶՊ): ՆՈՒՀ-ը ստանում է մշտական աջակցություն իրենց ամրագրված ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից: Ծնողները և մանկավարժները կստանան խորհրդատվություններ ՏՄԱԿ-ի և ՀՄԿ-ի մասնագետների կողմից: [Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց-ձեռարկ, Երևան 2021 թ. էջ 8-19]:

Գլուխ 2

2.1 Հետազոտության ընթացքը

Հետազոտության ընթացքում պարապմունքը անց է կացրել միջին խմբում: Պարապմունքի ընթացքում երեխաները ունեին շատ բարձր տրամադրություն, նրանք շատ մեծ հաճույքով գուշակեցին հանելուկները, պատասխանեցին հարցերին, դիտեցին նկարները և մեծ ոգևորությամբ խաղացին խաղը:

Պարապմունքի նպատակը՝ խոսքի և հաղորդակցման հմտությունների զարգացում: Պարապմունքին ներկա էին տնօրենը, մեթոդիստը և լոգոպեդը:

Հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրել եմ և օգտվել թեմատիկ գրքերից, կիրառել եմ տարբեր ուսումնադաստիարակչական մեթոդներ:

2.2 Պարապմունքի պլանը

Թեման՝ «Ընտանի և վայրի կենդանիներ»

Տեսակը՝ զրույց, նկարի պատմում, դիդակտիկ խաղ

Նպատակը՝

- ծանոթացնել երեխաներին ընտանի և վայրի կենդանիներին, նրանց ապրելակերպին,
- երեխաները կարողանան տարբերել ընտանի և վայրի կենդանիներին,
- հարստացնել բառապաշարը վայրի, ընտանի, գիշատիչ, կաթնասուն բառերով, կարողանալ կազմել պարզ նախադասություններ:

Անհրաժեշտ նյութեր՝ ընտանի և վայրի կենդանիների խաղալիքներով պատրաստված «ագարակ» և «անտառ», ընտանի և վայրի կենդանիների նկարներով պաստառ:

Պարապմունքի ընթացքը՝

Պարապմունքը սկսվում է հանելուկների ընթերցմամբ: Հանելուկները գուշակելուց հետո երեխաներին տրվում են հարցեր, որպեսզի իմանանք, թե նրանք ի՞նչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ:

- Ի՞նչ կենդանիներ գիտեք:
- Ի՞նչ օգուտ են մեզ տալիս շունը, կատուն:
- Ի՞նչ են մեզ տալիս կովը, խոզը:

Զրուցել երեխաների հետ կենդանիների մասին, բացատրել նրանց

- ինչո՞ւ են կենդանիներին անվանում ընտանի կամ վայրի,
- ո՞ր կենդանիներն են գիշատիչ, որո՞նք բուսակեր,
- ինչու՞ են կենդանիներից ոմանց կոչում կաթնասուն:

Որպեսզի երեխաների մոտ ավելի լավ ամրապնդվի կենդանիների մասին պատկերացումները՝ կխաղանք «խառնաշփոթ» դիդակտիկ խաղը:

«Անտառից փախել են վայրի կենդանիները և հայտնվել ընտանի կենդանիների մոտ: Նրանք կարող են վնասել ընտանի կենդանիներին:

Երեխաներին կխնդրենք, որ նրանք առանձնացնեն վայրի կենդանիներին և վերադարձնեն անտառ»:

Պարապմունքի վերջում հարցնել երեխաներին, թե ի՞նչ նոր բան սովորեցին կենդանիների մասին:

Ունկնդրել «Ո՞վ եմ ես» երգը կենդանիների մասին:

Դիտորդների կարծիքների վերլուծություն՝

Դաստիարակի կողմից ընտրված հետազոտական աշխատանքի թեման կարևոր է նախադպրոցական կրթության բնագավառում, քանի որ այն նպատակուղղված էր՝ նախադպրոցական տարիքի երեխաների լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիվացիոն, տնտեսական կարողունակությունների զարգացմանը, ինչպես նաև շարժողական, իմացական, խոսքի և հաղորդակցման ոլորտների վերջնարդյունքների ապահովմանը:

Եզրակացություն

Այսպիսով հետազոտական աշխատանքի արդյունքում՝ եկանք այն եզրահանգման, որ

- պարապմունքի կազմակերպումը խաղային տեխնոլոգիաների միջոցով՝ հնարավորություն տվեց ապահովել շփման և հաղորդակցման ոլորտում դժվարություններ ունեցող սաների ներառումը:
- խաղային տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն տվեց պարապմունքը դարձնել ավելի հետաքրքիր, մատչելի, ինչպես նաև զարգացնել երեխաների բառապաշարը, ճանաչել և տարբերել ընտանի և վայրի կենդանիներին, ինչպես նաև ծանոթացնել նրանց սնվելու առանձնահատկություններին:
- ԿԶԱՊԿՈՒ երեխաների կրթությունն ու զարգացումն ավելի արդյունավետ և համակարգված կլինի, եթե մանկավարժական կոլեկտիվի անդամները և ծնողները պարբերաբար ծանոթանան ներառական կրթության վերաբերյալ հստակ և համակարգված գիտելիքների, ինչի արդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետ կառուցել երեխաների հետ կազմակերպվող ուսումնադաստիարակչական աշխատանքները:
- Ներառական կրթության արդյունավետության համար կարևոր են խելամիտ հարմարեցումները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց-ձեռարկ, Երևան 2021 թ. 190 էջ
2. Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում, Մեթոդական ձեռնարկ, Երևան 2013 թ., 240 էջ
3. Հատուկ կարիքներով նախադպրոցականների խաղային գործունեության զարգացումը, Միզոյան Ք. Հ., Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2008 թ. 37 էջ
4. Նախադպրոցականների շփման հմտությունների ձևավորում, Ն.Հ. Վանյան, Ա.Ս. Լալաբեկյան, Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2008 թ. 37 էջ
5. Ներառական կրթությունը գործնականում, Սյուզաննա Պետրոսյան, Երևան 2021 թ., 75 էջ